



ԼԵՆ ԿԱՄՏԱՐ

Երջանիկ գուժկաններ

Մեր ազգի բանիմաց մարդիկ գուժկաններ են դարձել հասարակ ժողովրդին համար:

-Օգնությո՛ւն, օգնությո՛ւն, ազգը ձեռքն գնաց, թյուրքերը Սարիղամիշն են, քյուրդերը Կարաքիլիսեն, պարսիկները Շահթախթ,- կպոռա մեկը այդ գուժկաններեն ու տուն կմտնե:

-Ի՞նչ թյուրք, ո՞ր պարսիկ, ո՞ր է Կարաքիլիսեն. քալե երթանք, ցույց տուր սպանենք զանոնք, - ձայն կուտա ամեն կողմեն հասարակ ժողովուրդը և գենքն առած գուժկանին դուռը կվազե:

Գուժկանը պատուհանը կելնե:

-Թյուրքերը օսմանցիներն են, պարսիկները՝ շիաներն, Կարաքիլիսեն կգտնվի Խնուսեն արևելք, Դիադինեն արևմուտք, Ալաշկերտեն հարավ, Դութաղեն հյուսիս. աջ թևով կհառաջանաք, կծոխք ձախ՝ ահա այդտեղ է... Ծո, դեռ կեցե՞ր եք, հասե՛ք, հասե՛ք...

-Երթանք... բայց դուն չպիտի՞ գաս:

-Ծո, ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ, չերթալ կըլլա՞: Դուք առաջացեք, ես հա՛, մտա թեյս խմեցի հասա, շատ տաք է. ժամ մըն է կփչեմ՝ չի սառեր:

Ժողովուրդը կերթա, կանցնի երկու ամիս ու դեռ ատ մարդուն թեյը... չի սառեր:

Երկրորդ գուժկանը ճակատեն կդառնա ձիով, գրպանը լեցուն, չաղ ոռճիկին մնացորդները մորուքին վրայեն սրբելով:

-Ծո՛, դուն դեռ հո՞ւ ես, - կճշա ամբողջ ուժովը՝ կնոջ թևը մտած փողոցեն անցնող Մարկոսին վրա:

-Հապա ո՞ր ըլլայի,- վախեն կնոջ թևը թողած կհարցնե Մարկոսը:

-Ո՞ր, ճակա՛տը, ճակա՛տը, թշվառական, չե՞ս գիտեր: Այս րոպեիս ես հոնտեղեն կուգամ, Մանագկերտն այրվեցավ, Խնուսը գաղթեց, Ժողովուրդը սովալլուկ... և դուն դեռ կեցե՞ր ես,- կըսե մտրակը շարժելով:

-Մի պոռար, երթամ պիտի... արդեն ճակատն երթալու համար եմ տունեն ելեր,- կըսե Մարկոսն ամչցած ու վախեցած:

-Դե քալե՛, ալ ուշացեր ես:

-Իսկ դուն չպի՞տի գաս...

-Ծո, ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ. ես ազգային գործով եմ եկեր, գործս վերջացնեմ ու հասնեմ...

Մարկոսը ճակատը կերթա ու ինքը վերցնելով Մարկոսին կինը, գոր վաղուց կսիրեր, թևանցուկ տուն կդառնա... գործերը վերջացնելու: